420

1. Կապուտակ երկինք՝ բյուրեղյա, մաքուր,
Քեզ եմ նվիրում իմ հոգին թաքուն,
Տառապանք ու հոգս մոռացած հեռվում՝
Քո գիրկն եմ գալիս կարոտովդ լի:

Ծ, անհուն երկինք, գեղեցիկ ես դու,
Աստծո սիրո պես խորն ես ու անծիր,
Վերցնեմ ես թևեր ու թռչեմ հեռու,
Գլուխս դնեմ Հիսուսի կրծքին:

2. Աստղաշուք երկինք, դու՝ հրաշք լուսե,
Կերտված ես Աստծո հանճարով վսեմ,
Իմ երազներով քո գիրկն եմ թևում՝
Թողած հին կյանքի տենչերը նսեմ:

3. Ես լսում եմ միշտ շշունջդ բարի,
Զգում եմ ամոքող շունչդ իմ սրտում.
«Քո սպասումը չի լինի տրտում,
Երբ լինես հավետ Աստծո գրկում»:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025